

## ՀԱՅԵՐԵՆԻ ԱՆՀԱՅՏ ԾԱԳՄԱՆ ԲԱՌԱՐՄԱՏՆԵՐԸ

ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Բ. ԶԱՀՈՒԿՅԱՆ

Հայերենը հնդեվրոպական ամենաառեղծվածային լեզուներից մեկն է, Ֆինոգանի լեզուներից թերևս ամենաառեղծվածայինը, որ իր վրա բեռնել և շարունակում է բեռնել բազմաթիվ հետազոտողների ուշադրությունը: Մասնավորապես դժվար բացատրելի և որոշ առումով տարօրինակ են թվում հայերենի բառապաշարի հետևյալ երեք առանձնահատկությունները: Առաջին՝ հայերենի բառարմատների բնիկ հնդեվրոպական շերտը արդի ամենահամարձակ հաշվումներով հազիվ է հասնում բառարմատների ընդհանուր թվի 10—15 տոկոսին: Երկրորդ՝ արտակարգ մեծ է իրական փոխառությունների թիվը, որը, եթե նկատի առնենք նաև կողմնակի տվյալները, մոտ երկու անգամ գերազանցում է բնիկ հնդեվրոպական բառարմատների թիվը: Երրորդ՝ խիստ մեծաթիվ են հայերենի շատուգաբանված՝ անհայտ ծագման բառարմատները, որոնք մոտավոր հաշվումներով կազմում են բառարմատների ընդհանուր թվի առնվազն կեսը, եթե ոչ կեսից ավելին:

Այս հանգամանքները, ուրիշ այլ հանգամանքների հետ միասին, հիմք են տվել հայերենի վերաբերյալ ամենատարբեր եզրակացությունների համար՝ ընդհուպ մինչև նրա հնդեվրոպական բնույթը կասկածի տակ առնելը: Մասնավորապես շատ խորհրդածությունների տեղիք է տվել անհայտ ծագման բառարմատների մեծ թիվը: Առաջանում են հետևյալ բնական հարցերը. այդ բառարմատները պետք է դիտել միայն որպես սոսկ ստուգաբանելի նյութ, թե՞ կարելի է դրանց հիման վրա էական եզրակացություններ անել. որքա՞ն հավաստի և արժեքավոր կարող են լինել այն եզրակացությունները, որոնք դրանց հիման վրա արվել և արվում են հայոց լեզվի բնույթի և ծագման հարցերը լուծելու համար. որքանո՞վ են հավաստի հատկապես քանակական տվյալների վրա հենվող եզրակացությունները:

Բերենք երկու տիպական օրինակ, թե ինչպե՞ս են հայ նշանավոր լեզվաբանները մոտեցել անհայտ ծագման բառերի հարցին և օգտագործել դրանց վերաբերյալ քանակական տվյալները:

Իր «Հայոց լեզվի պատմություն» երկրորդ մասի վերջում, ի մի բերելով «Հայերեն արմատական բառարանի» 10 996 հայերեն արմատների ծագման վերաբերյալ տվյալները, Հ. Աճառյանը տալիս է հետևյալ պատկերը: Չմեկնելով՝ կամ անհայտ ծագման բառերը միարժեք չհամարելով և փաստորեն քննարկումից հանելով, այսպես կոչված, «անվավեր» (միայն բառարաններում հանդիպող, աղավաղված, սխալագիր, կեղծ) բառերը՝ թվով 2224, նա մնացած արմատական բառերը՝ թվով 8775, բաշխում է հետևյալ կերպ.

- 1) հնդեվրոպական՝ 927.
- 2) փոխառյալ՝ 4015.
- 3) չմեկնված՝ 3680.
- 4) բնաձայնական՝ 153<sup>1</sup>.

Այսպիսով, խոսելով «չմեկնված» արմատական բառերի մասին՝ Հ. Աճառյանը դրանց թիվը սահմանափակում է 3680 բառով, բայց այդ թվի համար էլ նա անում է մի շարք այլ սահմանափակումներ՝ նշելով, որ դրանց մեջ կարող են լինել հնդեվրոպական նոր արմատներ, հավաստիորեն շատուգաբանված (մանավանդ իրական և կովկասյան ծագման) բառեր և այլն:

<sup>1</sup> Հ. Աճառյան. Հայոց լեզվի պատմություն. հ. 2, Երևան, 1951, էջ 602.

Մնացած լատերի մեծագույն մասի համար Հ. Աճառյանը հակված է ենթադրելու որարտական ծագում: Մասնավորապես նա առանձնացնում է 8 խմբի բառեր, որոնց համար տվյալ ենթադրությունը ամենից ավելի հավանական է համարում: Այդ խմբերից, որոնք վերջերս վերստին քննված են և սեկնարանված նոր տվյալների լույսի տակ<sup>2</sup>, ստորև կտրվեն որոշ օրինակներ. 1) դույներ՝ գորշ, երփն, թուր, լուր (լուրջ), խած, խարտեաշ, ծափ, կաճաշ, ղէկ. 2) մետաղների անուններ՝ երկաթ, կապար, ոսկի. 3) բույսերի անուններ՝ եղիճ, կոտիմն, ցոբեան, ծիրան, խնձոր. 4) ամանների անուններ՝ անաւ, զուշ, խուփն, խեցի, կալր «կողով», կարաս, կնձոն, սափոր. 5) ստանանկությունը (շուհանկությունը) վերաբերող՝ ազբն, ծոպ, կապեհտ, կծիկ, կկն (կկոց), կարել, հլուսել, մանել. 6) ընտանեկան հարաբերությունների անուններ՝ անեհ, զսուակ, զոմանշ, խնամի, փեսայ. 7) դրամների անուններ՝ բնիոն, խեբեւէշ, նաֆարակիտ. 8) դրի հետ կապված բառեր՝ գիծ, թուղթ, կածին «դրիշ»:

Յուրահատուկ ձեռք է օգտագործել Հ. Աճառյանի «Հայերեն արմատական լատերանի» նյութի հիման վրա կատարված հաշվումները Գ. Ղափանցյանի: Ունենալով այն տեսակետը, որ հայերենը տարասեռ բաղադրիչներ ունեցող «ասիանիկ» լեզու է, և առանց տարբերակման քննելով անհայտ ծագման բառերը՝ վերջիններիս վերաբերյալ տվյալները նա օգտագործում է իր հայեցակետը հիմնավորելու համար: Ըստ Ղափանցյանի, «հնդեվրոպական ծագման ճշտորոշված բառերի թիվը կազմում է տասը տոկոսից ոչ ավելի: Հետևաբար չփոխառված բառերի ողջ մնացած զանգվածը, որոնք մեծամասնությամբ, անկասկած, բնիկ հայկական են, սլիտի համարվեն ծագումով տեղական սուսիանիկ»<sup>3</sup>:

Այստեղ Գ. Ղափանցյանը թույլ է տալիս առնվազն երեք վրիպում:

1. Գտնելով, որ հայերենի հնդեվրոպական բառարմատների թիվը 450-ից չի գերազանցում<sup>4</sup>, Գ. Ղափանցյանը Հ. Աճառյանի և Ա. Վալդեի ու Յ. Պոկոնու բառարանների տվյալները առանց էական հիմքերի նվազեցնում է շուրջ երկու անգամ: Ըստ մեր աշխատություններում բերված տվյալների, որոնց մեջ օգտագործված են նորագույն ստուգաբանական հետադոտությունները<sup>5</sup>, Գ. Ղափանցյանի տված թիվը կարելի է ավելացնել առնվազն երեք անգամ: Ընդհակառակն, եթե անհայտ ծագման բառերի թվից հանենք «անվավեր» կոչվածները և այժմ արդեն ակնհայտ դարձած (հատկապես իրանական) փոխառությունները՝ անհայտ ծագման բառերի թիվը կարելի է գնահատել շուրջ երեք հազար: Այսպիսով, այժմ կարելի է ասել, որ քանակական առումով հնդեվրոպական և անհայտ ծագման (չստուգաբանված) բառարմատների փոխհարաբերությունը պետք է դնահատել ոչ թե 1:10, ինչպես անում էր Գ. Ղափանցյանը, այլ 1:2, համեմայն դեպս ոչ ավելի, քան 1:3:

2. Եթե նկատի առնենք ոչ թե քանակական, այլ որակական փոխհարաբերությունը, ապա կարելի է ասել, որ որակական արժեքով հայերենի հնդեվրոպական բաղադրիչները ակնհայտորեն գերազանցում են անհայտ ծագման բաղադրիչներին: Զխոսելով հնդեվրոպական քերականական բաղադրիչների մասին, որոնք կազմում են հայոց լեզվի կառուցվածքային որակը, և առանց որոնց հնարավոր չէ պատկերացնել հայոց լեզուն, նշենք, որ հայերենի հնդեվրոպական բառարմատները իրենց տեսակարար կշռով, գործածականությամբ, կայունությամբ և բառակազմական արժեքով ակնհայտ դե-

2 Հ. Աճառյան. Հայոց լեզվի պատմություն. հ. 1, Երևան, 1940, էջ 181—185:

3 Գ. Ղ. Զահուկյան. Հայոց լեզվի պատմություն. նախադրային ժամանակաշրջան. Երևան, 1987, էջ 436—437:

4 Г. Капанця. К происхождению армянского языка.—Историко-лингвистические работы. II, Ереван, 1975, с. 233.

5 Նույն տեղում, էջ 238:

6 Հմմտ. հատկապես Գ. Ք. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 111—157:



բաղկացնող լեզուներն ունեն անհայտ ծագման բառերի նկատմամբ: Բոլոր դերանունները և ստորին թվականները հնդեվրոպական ծագում ունեն, մի բան, որ ինքնին բավարար է հայերենի հնդեվրոպական բնույթը որոշելու համար: Եթե հանենք անհայտ ծագման բաղադրիչները, հայերենը կպահպանի իր լեզվական որակը. եթե հանենք հայերենի հնդեվրոպական բաղադրիչները, այն կդադարի հայերեն լինելուց:

3. Հայերենի անհայտ ծագման բառերը չի կարելի գնահատել որպես ծագումնաբանորեն և պատմականորեն միասնական արժեք ունեցող ամբողջություն: Ձխոսելով այն մասին, որ հայերենի անհայտ ծագման բառերը կայուն թիվ չեն կազմում, և որ այդ թիվը հակում ունի նվազելու ըստ նոր ստուգաբանությունների՝ նշենք հետևյալը. ա) անհայտ ծագման բառերը պատկանում են ժամանակագրական տարբեր շերտերի. գրավոր աղբյուրներում հանդիպող բառերի մեջ V դարում ավանդված բառերի կողքին կան մեծ թվով բառեր, որոնք ավանդված են համեմատաբար ուշ և մեծ մասամբ զալիս են ոչ հին աղբյուրներից. ակնհայտ է, որ ծագումնաբանական եզրակացությունների համար հարկավոր է նկատի ունենալ հատկապես հնագույն շերտը. բ) անհայտ ծագման բառերի գործածականության և տարածվածության աստիճանը նույնը չէ. շատ գործածական բառերի կողքին կան սակավ գործածական և նույնիսկ մեկ-երկու անգամ գործածված բառեր ու գրական փոխառություններ. հնագույն շերտին պատկանող և ամենից ավելի գործածական (այդ թվում՝ բարբառներում տարածված) բառերի՝ մեր կողմից կազմված ցուցակը ընդգրկում է շուրջ մեկուկես հազար բառարմատ. գ) ինչպես նշել է ինքը Ղափանցյանը, «Հայերեն արմատական բառարանի» նյութը պակասավոր է, և մենք չենք կարող վերջնական եզրակացություններ անել՝ առանց հաշվի առնելու բարբառների նյութը: Սակայն, համենայն դեպս, մի բան պարզ է. նույնիսկ բարբառների լիակատար ընդգրկման դեպքում էլ հայերենի հնդեվրոպական ծագման դրույթը չի կարող խախտվել. այդ մասին է վկայում վերջին հետազոտությունների հետևանքով բարբառային բառապաշարի մեջ հնդեվրոպական բնույթի մեծաքանակ բառերի հայտնադործումը<sup>7</sup>. սրանց կողքին կան անհայտ ծագման շատ բառեր էլ, որոնք հանդես են բերում գրավոր աղբյուրներում ավանդված բառերին հատուկ երևույթներ և զգալի մասով պետք է դիտվեն որպես ենթաշերտային ու փոխառյալ բառեր. դ) ունենալով այն պատկերացումը, որ անհայտ ծագման բառերը մեծ մասամբ բնիկ բառեր են (ըստ բնիկ բառերի իր յուրահատուկ՝ ոչ հնդեվրոպական լինելու ըմբռնման)<sup>8</sup>. Գ. Ղափանցյանը չի էլ փորձում սրանց մեջ տարբերակել, այսպես կոչված, ենթաշերտային (սուբստրատային) բառերը, որոնք էական են հայերենի հնագույն փոխհարաբերությունները պարզաբանելու տեսակետից. սրանց մասին խոսք կլինի ստորև:

Կարելի է արդյոք անհայտ ծագման բառերի բնույթի և աղբյուրների մասին եզրակացություններ անել կողմնակի ճանապարհներով: Լեզվաբանությունը զարգացման արդի փուլում այդ հարցին կարելի է դրական պատասխան տալ. մեթոդական առանձին սկզբունքների հիման վրա այժմ իրոք հնարավոր է որոշ գաղափար կազմել «անհայտ ծագման» բառերի ծագումնաբանական բնույթի մասին:

Մեթոդական առաջին սկզբունքը հայերենի անհայտ ծագման բառերի համեմատությունն է ընդհանուր նոստրատիկ բնույթի վերականգնված ձևերի հետ: Ինչպես հայտնի է, հնդեվրոպական լեզվաընտանիքը հեռավոր ցեղակցությամբ կապված է եղել սեմաքամական, քարթվելական, ուրալյան, դրավիդյան, ալթայան, այլև, ինչպես ցույց է տրվել մեր կողմից<sup>9</sup>, խուռա-ուրար-

<sup>7</sup> Հմմտ. Գ. Բ. Զահեկյան. Հայ բարբառագիտության ներածություն. Երևան, 1972, էջ 283—301.

<sup>8</sup> Г. Б. Джаукян. Урартский и индоевропейские языки. Ереван, 1963; Он же; Взаимоотношение индоевропейских, хурритско-урартских и кавказских языков. Ереван, 1967.

տական լեզվաընտանիքների հետ, որոնք կազմում են նոստրատիկ ընդհանրությունը, և որոնց հետ կարող են կապված լինել նաև այլ լեզուներ: Եթե հայերենի անհայտ ծագման բառերի մեջ կան նոստրատիկ ծագման այնպիսի բառեր, որոնք չեն գալիս հնդեվրոպական ընդհանուր բառերից՝ հայերենին հատուկ օրինակափոխություններով, ապա դրանք կարելի է բացատրել որպես ոչ-հնդեվրոպական նոստրատիկ լեզուների ներդրում հայերենի մեջ՝ ենթադրաբար աղբյուրային կամ փոխառության միջոցով: Նոստրատիկ ընդհանրությունների համար հիմք են ծառայել, բացի Վ. Մ. Իլիչ-Սվիտչի բառարանի տվյալներից, նաև Ա. Ռ. Բոմհարդի տվյալները: Բնականաբար օգտագործված են նաև մեր՝ վերևում հիշատակված դրքերի և այլ աշխատությունների տվյալները:

-(տ, ի, ու)կ (փոքրացուցիչ մասնիկ)<sup>10</sup>—քարթ. -k- (-ak-, -ik-), հ.-հ. -k- ուրալ. -kka/-kka, ալթ. -ka, -ka (փոքրացուցիչ ածանցներ)։

բաղ Վերից, հարս, բաղել Վերցորդել, միացնել (դ-բաղել, բաղ-եղն), ալթ. միաղ Վերից, հարս, միասին—քարթվ. b- Վկապել, կախել, ալթ. (թուրք. ba- Վկապել, լակուտ. baչ Վկապ, թուրք. bağ)։

բարի, բարուք. բար-ք (սովորաբար հատկացվում են, բերել բալի հետ միասին, հ.-հ. \*bher- արմատին, բայց Հ. Աճառյանը տարբերում է)—ուրալ. pa-a Վլավ, դրավ. par- մեծ, ալթ. bara Վշատ։

լիշանալ Վաչքի լուր ակարանալ—սեմ. -քամ bli Վկուր, ալթ. bal Վկուր։

ծամ (տ-ծոռ)—հ.-հ. (s)kemib- Վծուռ, ուրալ. Cumpa Վծուռ։

ծախ-սեմ. քամ. [SP] Վխիել, հ.-հ. skep- Վհեղքել, ուրալ. čappa Վխիել, լուիել Վխիել (էրդ- capo Վափահարել), դրավ. cava- Վտրել, ալթ. čap(a)- Վխիել, Վարել։

ծուլ (բրբռ-սեմ. -քամ. šl- Վցատկել, ծուլ լինել, հ.-հ. sk'el- Վցատկել, ծուլ լինել, ուրալ. čel- Վցատկել, ծուլ լինել)։

ծերիլ Վտարակիլ (հեղուկի մասին), ծորել Վհոսել—քարթվ. cwar- Վսար, ուրալ. čoga- Վկաթիլ, հոսել, դրավ. cōr- Վսար, հոսել, ալթ. čur(λ) Վկաթիլ հոսել։

ծուարիլ Վամփոփվել, կծկվել, հավաքվելով պահվել (բրբռ. մի տեղ հավաքվել լամրի մասին)—սեմ.-քամ. s(w)r šwr Վհմակ, Վազանախումբ, ուրալ. šura Վեղջերուների հոտ (?)։

կա(լ)-, կաց- (եթե հ.-հ. ք"ա- Վգնալ, գալ հիմքից չէ)—սեմ.-քամ. [qw] Վմնալ, սպասել, հ.-հ. k'el(ə)- Վհանգստանալ, ուրալ. koja- Վպառկել, հանգստանալ, դրավ. kē- Վհանգստանալ, պառկել, հմմտ. նաև ուրարտ. ka- Վկանգնել, երևալ (բառի առանձնացումն ըստ Ի. Մ. Դլակոնովի<sup>11</sup>։ համեմատությունը հալ. և նոստր. ձևերի հետ մերն է)։

լրբռ. կառ տալ/զցել Վվառել, կառել Վվառել—սեմ.-քամ. qr(r) Վվառել, հ.-հ. ker- Վայրել, դրավ. kar(λ)- Վխանձել, վառ(վ)ել։

© В. М. Ильич-Свитыч. Опыт сравнения ностратических языков, т. 1—3, М., 1971—1984; А. R. Bomhard. Toward Proto-Nostratic, Amsterdam, 1984.

<sup>10</sup> Սովորաբար համարվում է իրան. փոխառություն՝ թերևս բաղադրված հ.-հ. ձևերի հետ, բայց հ.-հ. k-ի դիմաց հալ. k-ն ընդհանրապես դժվար բացատրելի է։

<sup>11</sup> И. М. Дьяконов. Урартские письма и документы, 1963, с. 89.



կառափ(ն) «գլուխ. գանգ»—սեմ.-քամ. qṛ- «եղջյուր», հ.-հ. k'er- «եղ-  
ջյուր», գլուխ. բարձունք» (հան. աստ. xāra «գլխա»).

կար լար, թոկ. հզդ. կար»—սեմ.-քամ. kṛ «կապել, շուռ ասլ» . քարթվ.  
kar-/ker- «կապել», հ.-հ. k'er- «կապել» (հալ. բառը կարող է փոխառու-  
թյան լինել քարթվ. աղբյուրից).

կարի-ք—թյուրք. k'ar-γā- «չհերիքել, կարիք լինել» . նոսարատիկ ալլ  
լեզուներում Դ-ի փոխարեն 1 կա՝ քարթվ. kēl-/kai- «կարիք զգալ», ուրալ.  
kelke «կարիք լինել».

կարկան(>վրաց. karkarī, karkarc-vanl «բարձր ժալո»)¹²—սեմ.-քամ.  
qr «ժալո, լեռ, բլուր», հ.-հ. ker- «ժալո, քար», դրավ. kar(a) «ափ. 1. զո» (?).

կափ- «փակել, բռնել, թակարդը գցել. խփել. կպչել» . կոփ:պ «աչքի  
կոպ» (հմմտ. նաև խափ-, խուփ-)—սեմ.-քամ. kṛ-/qṛ- «ծածկել. փակել»,  
դրավ. kapp-/kavā «ծածկել», ալթ. kʰapa- «փակել». հմմտ. նաև սեմ.-քամ.  
qb- «բռնել. կծել», քարթվ. kb- «կծել», հ.-հ. ḡhabh-/kap- «բռնել վերց-  
նել, պահել», դրավ. kavv-/kapp- «բռնել (բերանով)», kava- «բռնել», ալթ.  
kʰaba-, kʰapa- «բռնել».

կլոր, կոլոլ (եթե հ.-հ. \*gel-ից չեն. Հ. Աճառյանը դիտում է որպես  
կլոր-ի բարբառալին տարբերակ, բայց անցումն սրինաչափ չէ) —սեմ.-քամ.  
q(w)l «կլոր. պասվել», քարթվ. kwēr-/xwāi- «կլոր», հ.-հ. kʷel- «կլոր.  
պտտվել», ուրալ. kol'a «շրջան», ալթ. Kol'a «խսանել. պտտվել» (?).

կում—սեմ.-քամ. q(w)m «խժռել, ուտել», հ.-հ. kʷem- «կլանել.  
խմել».

կուռ—հ.-հ. kwer- «կառուցել. անել», ուրալ. kuṛa-/koṛa- «միահյուսել.  
ամրացնել», դրավ. kuṛa- «միահյուսել, կապել, մանել», ալթ. Kuṛa- «հար-  
մարեցնել, կառուցել, սարքել»¹³.

կոփել «տաշել. կոփել, կոել»—սեմ.-քամ. kHP «փորել, կտրել»,  
քարթվ. kār-/kēr- «կտրել», հ.-հ. kēr- «կտրել, ճղել» (?). (նոստր. kaHPA.  
կա ձայնավորի անհամապատասխանություն).

կուրծ-ք—քարթ. m-kerd- «կուրծք», հ.-հ. k'erd- «սիրտ» (?).

կուրտ (կրտել. բրբռ. կտտել «կտրել, փոքրացնել», կուսվի: «կուչ գալ») —  
սեմ.-քամ. qwr «կտրել, փորել. ծակ, բացվածք», քարթվ. qwer «կրտել»,  
ուրալ. Kuṛa «դանակ», դրավ. kūr [«սուր»], ալթ. Kuṛ-ča [«սուր»].

բրբռ. պադիլ «ընկնել»—սեմ.-քամ. pdH «ընկնել, պառկել». հ.-հ. ped-  
«ընկնել», դրավ. paṭa «ընկնել, իջնել, նստել, պառկել».

պախրէ «տավար, նախիր»¹⁴—սեմ.-քամ. bkr (pʰkr) «տավար, եղ»,  
հ.-հ. pek'u «մանր եղջերավոր անասուն», ալթ. pʰoke-r' «եզ, խոշոր եղ-  
ջերավոր անասուն». հմմտ. ուրարտ. pahini «խոշոր եղջերավոր անասուն».

բրբռ. պոռթել «պատռել», պոռթկիլ «ճանկոտելով պատռվել», պոռթակ

¹² Իլիւ-Սվիտիլը (1,34) հիշում է քարթվ. ձևերը՝ առանց սրանց հալ. աղբյուրն իմանա-  
լուս Հ. Աճառյանը (2, էջ 554) կառկառ-ը բխեցնում է կառ-արմատից, որի ծագումն անհայտ  
է, և որը նույնպես գալիս է նոստրատիկ աղբյուրից.

¹³ Աճառյանը (2, էջ 662), համեմատելով վրաց. kṛwa «խփել. կապել, կցել» բառի և  
քարթվ. ու կովկ. ալլ ձևերի հետ, ընդհանուր աղբյուր է համարում ուրարտերենը.

¹⁴ Հ. Աճառյանը (4, էջ 7) նշում է նմանությունը սեմ. ձևերին, բայց համարում հնչյու-  
նապես անհամարձակ.

«պատուվածք», պոռթկում ալ «զատվել» — սեմ.-քամ. (p)ṛ- «ճեղքել, քանդել, կտրել», քարթվ. p, rec- p, rīc- «պառն(վ)ել», հ.-հ. (s)per- «պատռ(վ)ել, ջարդել» (հայ. փերթ), ուրալ. para- «ջարդել, ճեղքել», դրավ. parī- 'pari- «պատռել, ջարդել, ճեղքել», ալթ. p<sup>o</sup>ōrū- / p<sup>c</sup>ūrū- «պատռել, փշրել, մանրել»:

պիժա- «մի քիչ, փոքր ինչ» (պ փխկ. բ-ի?) — ուրալ. pičā «փոքր», դրավ. pič- «փոքրիկ, կարճ», ալթ. biča «փոքր»:

սկրթել «քերթել» — սեմ.-քամ. qṛ- «քերել, վիրավորել», հ.-հ. k'era- «քանդել, ջարդել» (բալց հմմտ. (s)ker- «կտրել»), դրավ. kīra- 'kera- «քերել, անիծել», ալթ. k<sup>c</sup>ir(a)- «քերթել, քերել, խազել»:

Մեթոդական երկրորդ սկզբունքը կիրառվել է Հ. Աճառյանի և մեր կողմից: Դրա էությունն այն է, որ ի մի ձև բերվում հայերենի և վրացերենի ու կովկասյան այլ լեզուների այն ընդհանուր բառերը, որոնք իմաստային կամ այլ նկատառումներով չի կարելի բխեցնել իրարից, և որոնց համար պիտի ենթադրել մի երրորդ անձանթ աղբյուր: Հ. Աճառյանը որպես այդպիսի աղբյուր մատնանշում է ուրարտերենը («խաղերեն»): Առաջին բառերը բերված են Հ. Աճառյանի «Հայերեն արամատական բառարանում» (2-րդ հրատ. 1—4, Երևան, 1971—1979), մեր «Հայոց լեզվի պատմության» մեջ (Երևան, 1987) և հատկապես այդ հարցին նվիրված «Հայ-քարթվելական ընդհանուր փոխառությունների մասին» հոդվածում<sup>16</sup>: Քանի որ վերջինիս մեջ բերված են ամենից ավելի հավաստի և լրացված տվյալները, ստորև տրվող նյութը հենվում է հիմնականում նրա վրա: Նշենք, որ մեթոդական առաջին և երկրորդ (ինչպես կտեսնենք, նաև երրորդ) սկզբունքներով առանձնացվող բառերի մեջ կան (և չեն կարող չլինել) գուգադիպումներ, որոնք հենց խոսում են այդ սկզբունքների ղգալի արդյունավետության մասին:

գալտի (քիչ հավանական է դ-գաժիլ «հագնվել» բալի հետ միասին հանգեցնել հ.-հ. uez- «հյուսել, կապել» արմատին<sup>16</sup>) — վրաց., մեգր., ճան., սլան. zwedl «գալտի»:

երկաթ (հմմտ. երկին-ք?) — վրաց., մեգր. rkina, ճան. erkina «երկաթ» (հմմտ. նաև լեզգ. pakl, թաթա. pykl «երկաթ»):

երփն — վրաց. perl «գուլն» (ըստ Մուրվալլանի):

դավիղ (գովոզ, գուռ) «ընկեր» — վրաց. zawl «խաղաղություն, բարեկամություն, հաշտություն» (?):

թեփ — հ. վրաց. tēpl «ներքան, կոշկատակ», tēpl «(կեչու) կեղև» (?):

թթու — վրաց. tutubo «մի րույս՝ ցմախ», լակ. tutul «քացախ»:

խաւ վրաց. xwawl «կույտ», մեգր. xwa «երամ», սլան. xwajl, xwaji. «շատ» (?):

ծանր, ու — վրաց., մեգր. con-, ճան. čon-, čin- «կշռել»:

ծալր — վրաց. čwerl, մեգր. čwandl, cwanjl «մորուք, ծալր» (հմմտ. լակ. члурн, լեզգ. ччурн «մորուք»):

ծիր, ծրկ «գծել, գրել» — վրաց. čer- մեգր., ճան. (n)čar-, սլան. (j)ṛ- «գրել», հմմտ. ավկադ. siru «եզր, ծալր» և ešēru(m) «նկարել, գծել»:

ծալիլ «տանիքի գերան», բրբռ. ծիպիլ «ցանկապատ», ծիպլի «ճիպոտ» — վրաց. čkerla, մեգր. čkappil «ճիպոտ» (բրբռ. ծիպլի-ն փոխառություն է):

<sup>16</sup> Г. Б. Джаукян. Об общих армяно-картвельских заимствованиях. Тбилиси, 1990.

<sup>16</sup> է. Բ. Աճառյան. Բառաբանական և ստուգաբանական հետազոտություններ. Երևան, 1974, էջ 50:



կար, կարել—վրաց. *kar-/kr-*, մեզր. *kər*, *kir-*, ճան. *kor-/kir-* «կապել».  
 խեց—վրաց. *keci* «կապի թավա, կապի տապակ», մեզր. *kici*, *kəci*, ճան.  
*kiçi* «քարե թավա, քարե տապակ» (ըստ Աճառյանի՝ փոխառություն հայե-  
 րենից)։

խծուծ, խզուզ, խծծել (հմմտ. խոզան, խոլզ- խազել և խուզ-, խզել)—  
 վրաց. *xweči* «տաշել», հմմտ. ակկադ. *ḫašašu(m)* «կտրել, կտրել-հանել».  
 պոկել, երբ. *hšš* «անջատել», *ḫuššusu* «պոկված»։

խոփ (խոբ)—վրաց. *xopi*, *xopi* «թի, թիակ»։

խրտնուլ—վրաց. *kr̥t-* «վախենալ, ցնցվել, խրտնել», մեզր. *k̥it-* «վա-  
 խենալ, հեկել», ճան. *(m)kūt-* «վախենալ»։

ծամ—վրաց. *čamčami* «արտեանունք», *ča-čni-is-i* «քուրձ, մազադրև»,  
 ճան. *čamčami* «արտեանունք»։

կարկած «զդում» (բրբռ. նաև «զանգ, դուխ») — վրաց. *qarqara*, *qoqore*  
 «զդումի տեսակ», սվան. *(h)aqari*, *aqari* «զդում. զանգ»։ հմմտ. ուրարտ.  
*aqarqi* «մի հեղուկաչափ», *qarqaranī* «պատլան» (?)

կից (եթե հ.-ե. *\*g<sup>n</sup>ei-* «սեղմել, շրջապատել, խցկել» արմատից չէ՝)  
 (հմմտ. և կծիկ?) — վրաց. *kec-* «ծալել», մեզր. *kəč-*, *k̥ič-* «կծկել, ամփոփել»։

կորդ «խոպան» — վրաց. *ḳordi* «խոպան», ճան. *ḳordi* «հողակոշտ, գուղձ».  
 հմմտ. ուրարտ. *quldi* «անպտուղ, խոպան, անապատային(?)»։

կոտոր, կոոր, կոտր, կտոր, կտիր (հմմտ. նաև խոտոր?) — վրաց. *xoṭr-*,  
 մեզր., ճան. *xoṭor-*, *xuṭor-*, ճան. *xoč-*, սվան. *xinčor-* «խուզել»։

կուռ, կուռք, կուել — վրաց. *ḳrwa-* «խփել, կապել, կցել» (ըստ Աճառյա-  
 նի), բայց հմմտ. վրաց. *ḳweri* «մեծ մուրճ», *ḳurīwi* «խիտ, կուռ»։

ձաբ-ոտ-ել «դռնողալ, վատ գրել» — վրաց. *jab-unī* «վախկոտ, խար-  
 խուլ» (?)։

ձրձել «կորզել, շորթել, կեղեքել, գզել» — վրաց. *ḳar-ḳrc-* «կողոպտել»։

ձունձ «ցնցոտի» (հմմտ. ցնցոտի, ցունց- և, թիրես, ձորձ «հագուստ») —  
 վրաց. *ḳonḳi* «հնոտի, քուրջ»։

մսուր — վրաց. *meseri* «ցցապատնիշ», ճան. *masari* «ցից», սվան. *meseri*,  
*maseri* «ցցապատնիշ» (?)։

նեխ — վրաց. *nexwi* «գոմաղբ» (?)։

սլիհիլ (բրբռ.) — վրաց. *slek-/slik-* «հարթել, փափկացնել», մեզր. *s'rk-*  
 «լիզել»։

սունկիզ(ն) — վրաց. *soḳo*, *zəko*, մեզր. *səko*, սվան. *soḳ(w)i* «սունկ».  
 հմմտ. նաև հուն. *σπόγγος*, *σφόγγος* «սպունգ», լատ. *fungus* «սունկ»։ քարթվ.  
 բառերը թերևս ծագում են կամ հ.-ե. աղբյուրից կամ վերջինիս հետ միա-  
 սին մի այլ ընդհանուր (միջերկրածովյան) աղբյուրից։

վաղ, վաղիւ «վաղը» — վրաց. *xwal* «վաղը»։

տանիլ, տարալ — վրաց. *ṭan-* «ուղարկել» և *ṭar-* «տանել»։

ցող (ցող) — վրաց. *cwāri*, մեզր. *cunḳi*, *cunḳi* «ցող», սվան. *cwari* «կա-  
 թիլ»։

ցիխ, ցեխ — վրաց. *mčik-*, մեզր. *čik(w)-* «կեղտոտել»(?)։

փշուր, փշրել — վրաց. *pšeri* «փռել», *pšwna-* «կալսել»։ հմմտ. խեթ.  
*paršlul-*, *paršull-* «փշուր», *paršur-* «կտորներին կերակուր, բրդոք»։

փուխր, բրբռ. փխիլ — վրաց. *pxwieri* «փուխր, pxwna «փշրել» (հմմտ.

աղբղ. օռնեմքն զհիսրունքս. կար. օռնեմք զիստորահատիկ. կոշտ. փիսրունքս. համար. նախ ասի ասի. 1: 11: Դատելի. կոտորել. փշռել:

Մեթոդական երրորդ սկզբունքը կիրառվել է մեր կողմից «Հայոց լեզվի նախադրարին շրջանի պատմության ուրվագծեր» գրքում<sup>17</sup>: Այստեղ փորձ է արվել առանձնացնելու հայերենի բառապաշարի այն շերտը, որ ունի հայերենի բուն օրինաչափություններից շեղվող (բուն հայերենին ոչ բնորոշ) հնդեվրոպական զուգահեռներ. տվյալ դեպքում մեղ համար սրանցից կարևոր են այն բառերը, որոնք կարող են լինել կամ հնդեվրոպական մի անծանոթ լեզվի, կամ ծանոթ լեզվի անծանոթ տարրերի, կամ հնդեվրոպական լեզուների հետ հեռավոր ցեղակցությամբ և հնագույն շփումներով կապված ոչ հնդեվրոպական լեզուների ներդրում: Այդ բառերը, բնականաբար, որոշ մասով կհամընկնեն առաջին սկզբունքով առանձնացված այն բառերի հետ, որոնք նոստրատիկ բնույթ ունեն, բայց, ինչպես այդ բառերը, չեն բխում հնդեվրոպականի պահպանած նոստրատիկ շերտից: Հնչական առումով դրանք բնութագրվում են հայերենին բնորոշ բաղաձայնական տեղադարձի և քմայնացման երևույթներից, շփականների, ձայնորդների և ձայնավորների փոփոխության սովորական օրենքներից կատարվող զանազան շեղումներով: Վերոհիշյալ դրքի ավելաները հետագայում յրացված են բարբառային տվյալներով<sup>18</sup>, Հետաքրքիր է նշել, որ այս կարգի բառերը հաճախ ակնհայտ զուգահեռներ ունեն հայերեն բուն հնդեվրոպական բառերի հետ՝ կազմելով սառուղարանական մերձավոր կրկնակներ (դուբլետներ), և կարող են դիտվել հայերենին մերձավոր լեզվի կամ հայերենի հնագույն բարբառների օրինաչափությունների արտացոլումներ. համար. փէք ԲԵԳ, խեղճ՝ հէգ (āḫ) բառի կողքին (հ.-հ. \*pei-u-), տէն Բթաց, խոնավ՝ քէն Բթացություն, խոնավություն՝ րառի կողքին (<թայն <հ.-հ. \*ta.i-n-) և այլն:

Մեր աշխատություններում րացահայտված բառերից բերենք մի քանի լինորոշ օրինակներ.

կալ Եկալսելու տեղ. բարդոց. լուսեղեն շրջանակ լուսատուի շուրջը—հուն. πάλος Ժառանցք. կրկնակամար. շրջադարձ. շրջապատյալ, վարած արած, լուս. colō, -ere Ժալկել. հ. իսլ. hvall Եկլոր բլուր (հ.-հ. \*k<sup>u</sup>el-).

կագ, կեղ Ժծուռ—հայ. խեղ (\*k<sup>h</sup>el-), շեղ (\*sk<sup>h</sup>el-), շիլ, հուն. χαλός Ժծուռ, χαλός Ժծուռ, կագ, ալբ. tshalë Եկաղ (հ.-հ. \*(s)k(h)el-).

կապ—գոթ. haftjan Ժամրացնել, հ. հյուս. hefta Եկապել, խանգարել, hapt Եկապանք (հ.-հ. \*kap-).

կապուտ Եկողպուտ (համար. կապ) —ալբ. kap Երոնում եմ, լատ. capio, -ere Եվերցնել. գրավել, որսալ, գերել, captura Եորս. ձեռքբերում. շահույթ (հ.-հ. \*kap-).

կառել Եայրել—հայ. խարել, խորշել, լիտվ. karštas Եկիպիչ, տաք, վառ (հ.-հ. \*ker-).

կառնուլ Եվախենալ—հ. իսլ. skjarr Եվախկոտ, skirra Եվախկցնել (հ.-հ. \*(s)ker-).

կարուս—հ. հնդկ. carú- Եկաթսա, karkarī Եկուժ, հ. անգլ. hwer Եկալժոտ (հ.-հ. \*k<sup>u</sup>er-). համար. լակերենի և կովկ. այլ լեզուների համապատասխան բառերը՝ ընդհանուր փոխառություն ունենալով<sup>19</sup>,

կարճ—լատ. curtus, ռուս. короткий, краткий (հ.-հ. \*(s)ker-).

17 Г. Б. Джаякян. Очерки по истории дописьменного периода армянского языка. Ереван, 1967.

18 Գ. Բ. Զահարյան. Հայ բարբառագիտության ներածություն. Երևան, 1972.

19 Եթև իրանական աղբղից չէ. համար. հ. հնդկ. kalāsa-Եկճուս, կուժ:



կիլ, կէլ «նենգութիւն. դավ», կկլուրք «հնարք, ճարտարութիւն»—լատ. calvor «հնար գտնել, մաղապուրծ լինել. խարել», calumnia «գրպարտութիւն, կեղծիք. ՚ենգութիւն, դավ». գոթ. hōlon «գրպարտել» (հ. հ. \*kēl-).

կոյոփոց «վեգ, կոճ»—հուն. κωλύψ «նկատու. վեգ, կոճ» (հ.-հ. \*(s)kel-).

կորճ «կեղե»—լատ. cortex «կեղե» (հ.-հ. \*(s)ker-t-).

հերկ «վար. վարած հող, արա»—հ. հնդկ. pārsāna- «ճեղք», լատ. porculetum, հ. վ. գերմ. furch, գալլ. rica, հ. բրետ. rec «ակոս» (հ.-հ. \*perk'- «հերկել», որ պիտի տար հալ ʾānru). կապ ունի արդյոք հերձ (հերձել) արմատի հետ.

պաղ «փալլ» (պաղպաղ, պաղպաղանք)—փաղփաղել, (փող)փողել, փալլ, հ. հնդկ. sphulinga- «կալծ», հ. գերմ. flinkern «փալլել» (հ. -հ. \*(s)p(h)el-).

տեղմ, տիղմ, բրբռ. տիլ—հուն. τέλει «կանգնած ջուր, ճահիճ. կավ», անգլ. stale «մեզ» (հ.-հ. \*(s)tel-). անհամոզիչ են և՛ հունարենից փոխառյալ (Պեդերսեն), և՛ բնիկ հայերեն լինելու (Աճառյան) վարկածները.

տենչ—լատ. tendō, -ere «ձգել. հակում ունենալ, ձգտել» (հ.-հ. \*ten-).

տիգ «ծղի, բազուկ»—հալ. թեկն «թե, կոնակ. ուս», ռուս. стерно «գիտտ» (հ. -հ. \*(s)teig-).

տղակ «ջրի փոքրիկ սրգ»—ռուս. тля «տտիճ, ճճի» (հ.-հ. \*ta-, \*tl-, tū- և ալլն՝ -l- ածանցով).

տր-տր-ել—հուն. τέρω «մաշկեցնել. տանջել», լատ. terō, -ere «տրորել», ռուս. тереть «տրորել» (հ.-հ. \*ter-).

փակել «փակել. փակցնել, կպցնել»—հ. հնդկ. pās- «դակ. թոկ», ավ. pas- «ամրացնել, միացնել» հուն. παχυνω «փակել. կապել. ամրացնել» և ալլն (հ.-հ. \*pak'-, \*pag'-).

փետար—հ. հնդկ. pāttra- «թե, փետուր», հուն. πέτρων «փետուր. թե», գերմ. Feder, իսլ. fidur «փետուր» (հ.-հ. \*pet-, \*-r-, \*-tro- և ալլն).

փիծ (փից, պիծ, պիւծ) «պիղծ, անմաքուր»—լատ. piget «զայրացուցիչ է, ահա՛ն է», piger «զանդաղիտ, անզգա, մոռալ», հ. անգլ. ficol «նենդ, անհոսալի» և հ. հնդկ. pīṣuna «թշնամական, դավաճանական», լիտ. peikti «պախարակել» pikūlas «ստտանա» (հ.-հ. \*peig'-, \*peik'-):

Մեթոդական շորորոգ սկզբունքը առաջադրվել և կիրառվել է մեր «Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան» աշխատության մեջ (Երևան, 1987): Ինչպես հայտնի է, հայերենի մեջ ենթադրվում է ուրարտական ուժեղ ենթաշերտ: Քանի որ մեզ հասած և քիչ թե շատ մեկնաբանված ուրարտական բառերի թիվը մեծ չէ (շուրջ երեք հարյուր), մինչդեռ հայերենի անհայտ ծագման բառերի թիվը, ինչպես տեսանք, հազարների է հասնում, պետք է կարծել, որ սրանց մեջ սլաւոնական են ուրարտերենին հատուկ ածանցներով, ուրարտերենի հնչական և կառուցվածքային առանձնահատկություններով բնորոշվող բառեր՝ վերջնային խ-ով (հմմտ. ուրարտ. hi/e ածանցը)՝ խաղախ «նավակ», խիզախ, ձախ, կախ, կամախ «րնծա», մախ «նախանձ», գե(ղ)խ, մեղեխ «կացնի կոթ», նեխ, ցեխ (ցիխ), մանա-նիխ, պաւրիխ «փողոց», կոխ, նոխ, բոխ, քոխ, կանչոխ, կանուխ և այլն. -ախ-ով (հմմտ. ուրարտ. -šh/e)՝ խաւիսխ, խուիսխ «մեղրահաց». ոչ հնդեվ-րոպական -իւն-ով (հմմտ. ուրարտ. iui/e)՝ դիւրիւն, խուրիւն, խրքիւն. բայական -ոդ-ով (հմմտ. ուրարտ. -ul-)՝ խնոդել (հմմտ. խնել), ձախոդիլ. -ուր-ով կամ -ուր-ով (հմմտ. -uri), որոնցից խնծուր բառի խուռական աղբյուրը հայտնի է (hinzuri)՝ ախլախնծուր «ձնծաղիկ», ախնքուր «ծառայական», աղ-տուր «մի բույս», գղքուր «մի ներկանյութ», ժխուր, խեփուր «պատյան» (խեփ-անալ «կարծրանալ»), կոտուր պղտուր (հմմտ. ալիզ), սովուր, ստուր, ցնուր,

փոքոր (փոք «ծալք»), ամուր, բարուր «պատրվակ», լախուր (նեխուր), կե-  
լուր-ք «հնարք» (կել «նենգություն, դավ»), մսուր և այլն. ուրարտական  
-նի-ով հիմքերի առատությունը հիմք է տալիս անհայտ ծագման -ն-ով շատ  
բառերի համար ենթադրել ուրարտական ծագում՝ գաղձն, եղեամն, եղերդն,  
լիսեռն, լորձն (հմմտ. լորտու), կառսփն, կառն «թաղիք», կննիռն, կոտիմն,  
ոլոռն, ոսպն, որդն, որումն, ուռն «մուրձ», սաղմն, սկիզբն, ցակն «աղբա-  
տություն» և այլն. ուրարտ. -i-ով հիմքերի առատության դեպքում հայերեն  
անհայտ ծագման -ի-ով մի շարք բառերի համար պետք է ենթադրել ուրար-  
տական ծագում՝ անօւր, ապառաժ, արփ «եթեր», ափիս, բիծ, գէշ, գիծ, խաղ  
«ճահիճ», խիղն, խիտ, խոշոր (խոժոռ), ծայր, ծերպ, կա(յ)ն «թաղիք», կայք  
«կողով», կայմ, կապերտ, կոպ (կոփ), հեստ «անհնազանդ», նապաղ, մագ,  
մաղ, մաղձ, մայո «երակ», յոտուր, նեղ, շեշտ, ողկոյզ, ցնորհ, ցոփ, փոք,  
փոս և այլն:

Այժմ անցնենք այն հարցերի քննությանը, թե ի՞նչ տեսակարար կշիռ  
ունեն շատուգաբանված (անհայտ ծագման) բառերը հայերենի բառապաշարի  
մեջ, մասնավորապես՝ թե ինչպե՞ս են նրանք բաշխվում ըստ իմաստային  
(թեմատիկ) տարբեր խմբերի: Ի տարբերություն Հ. Աճառյանի, որ, ինչպես  
նշվեց վերևում, առանձնացրել է բառերի 8 խումբ, որոնց մեջ, նրա կարծի-  
քով, ամենից ավելի հավանական է ուրարտական ծագման բառեր որոնել,  
մենք հարցը կքննենք սովելի լայն առումով՝ ցույց տալով անհայտ ծագման  
(շատուգաբանված) բառերի բաշխումն ըստ այն իմաստային խմբերի, որոնք  
հիմք են ընդունվել մեր «Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանա-  
կաշրջան» աշխատության մեջ բնիկ և փոխառյալ բառերի բաշխման համար:  
Դա հնարավորություն կտա յուրաքանչյուր խմբի ներսում որոշել շատուգա-  
բանված բառերի տեղը և արժեքը:

Անհայտ ծագման բառերը առանձնացված 23 թեմատիկ խմբերի մեջ  
հավասարապես չեն բաշխվում: Ամենից ավելի բազմաճյուղ են ընդհանուր  
բնույթի՝ ֆիզիկական աշխարհի, բույսերի, կենդանիների, մարմնի մասերի  
անվանումները: Իավականաչափ շատ են ազգակցության, ուտելիքի և ըմ-  
պելիքի, հագուստի և զարդարանքի, բնակարանի, կահավորման և արհեստ-  
ների, տարածքային բաժանումների, հասարակական-քաղաքական հարաբե-  
րությունների, տարածական և ժամանակային, մտածողության և հոգեվիճա-  
կի հետ կապված անվանումները: Քիչ են ունեցվածքի, սեփականության և  
առևտրի, ռազմական գործի, կրոնի հետ կապված բառերը: Փաստորեն չկան  
օրենքի և դատական գործի հետ կապված տերմիններ և սպասարկու բառեր:

Անհայտ ծագման բառերի մեջ առանձնացնենք առաջին հերթին լայն  
դորձածություն ունեցող, զբաղմունքի և աշխարհաբարի համար սովորական  
բառերը: Քանի որ սրանց թիվը բավականաչափ մեծ է, բավարարվենք առան-  
ձին բնագավառներից բերված օրինակներով. 1. ֆիզիկական աշխարհ՝ անձ-  
րեւ, բուրբոս, գետին, դար «բարձրավանդակ», ծերպ, ծիածան, ծմակ, մշուշ,  
մոխիր, պայծառ, ստուեր, վարար, ցեխ, ցոլ, ֆամի և այլն. 2. սեռ, տարիք,  
ազգակցություն՝ գաւակ, գոհանչ, էգ, կոյս, պատանի և այլն. 3. կենդանի-  
ներ՝ անգղ, արջառ, գագան, գրաստ, բուխս, լորտու, կարապ, նայ, հպտուն,  
նախիր, ջորի և այլն. որսի և անասնապահության հետ կապված՝ ծուղակ,  
մսուր, սանձ, ցանց և այլն. 4. մարմնի մասեր և մարմնական դորձեռու-  
թյուններ՝ ագի, ափշ, գանգ, գրգիռ, քաք, քաղանք, քարքել, քեփ, քիզ  
(նաև չափ), քոֆ, լորձն, խաւ «աղվամաղ», խեղդել, խուլ, ծարաւ, ծղի «դաս-  
տակ», ծոճակ, ծոց, կաղ, կաշի, կնդակ, կննիք, կոպ, կուժ, կուրծք, հաշմ,  
մորթ, մրափ, յօնք, յօրանջ, նիւջ, շուրքն, ուղեղ, պարսեղ, պնեղն, սաղմն,  
սպի, վիզ, առոփ, փետել, փետուր, փող «կողորդ», ֆաղիւրք, ֆիք և այլն.  
5. ուտելիք և ըմպելիք՝ արգանակ, խիւս, խարխիւս, կուժ, ձաւար, մակարդ,  
մրեւ-ֆ, շերեփ, փոխիւնդ, օդի և այլն. 6. հարուստ, զարդարանք և խնամք՝  
բանկոն, գօտի, ժապաւէն, կկել, հիւսել, մանել, շղարշ, սանուր, փոք, փոկ  
և այլն. 7. բնակարան, տուն, կահավորասի, արհեստներ՝ աթոռ, աղիւս,  
բուրձ, ծ(ղ)խնի, փան «թաղիք», կապերտ, կարաս(ի), կնուն(-իւն), կոք, կոկ,



մառան, մարագ, յեսան, պատ, սանդուղ, սեղան և այլն. 8. բուսականություն, երկրագործություն՝ բանջար, գերանգի, դդում. եղերդն, եղէզն, եղինջ (եղին), խաղող, խէժ, խապան, ծիրսն, կառիմն, կորիզ, հանար, հասկ, հերկ, հունձ (հ.-հ. ?), յարգ, շամբ, շանմ(արան), ողկոյզ, ոսպն, որմն, ունդ (հունդ), շամիշ, սերկնիլ, սինձ, սոճի, վուշ, տանձ, տունկ, ցանել, ցորեան և այլն. 9. ֆիզիկական գործողություններ, արհեստներ, գործիքներ և նյութեր՝ աղիւս, բախել, բեւեռ, գամ, երկաթ, թափել, ծակել, ծաւալել, կապել, կառ(-ուց-անել), կոփել, կոտորել, հանգոյց, հերձել, հիւսել, հիւսն, ոսկի, շուան, պատառել, պարան, շարդել, արորել և այլն. 10. շարժում, տեղափոխություն, փոխադրում, նավագնացություն՝ լիսեռն, խարիսխ, կայմ, կանգնիլ, հալածել, հոսիլ, մղել, շարժել, պրծանիլ, սայթափել, սաւառներ, սողալ, ցունց (ցնդել) և այլն. 11. ունեցվածք, սեփականություն ու առևտուր՝ աւանդ, ժառ, ծախ, կողոպուտ, պարգև և այլն. 12. տարածական հարաբերություններ. տեղ, ձև, չափ՝ խիտ, խոշոր, խոտոր, խորշ, ծայր, ծանծաղ, ծաւալ, կապար, կարն, հոծ, ձախ, նեղ, ուղիղ, չափ, ստոր և այլն. 13. քանակ և թիվ՝ դատարկ, լոկ, խումբ, կէս, հառ, սոսկ, սուղ և այլն. 14. ժամանակ՝ աւարտ, կանուխ, մերթ, յամել «ուշանալ», սկսանիլ, վախճան, վաղ և այլն. 15. զգայական ընկալումներ՝ անսալ, գորշ, եղկ «գող», երփն, բեթել, թոյր, լուրթ/շ, խարտեաշ, կանաչ, հայիլ, շէկ և այլն. 16. զգացմունք, խոռնվածք, բարոյական և գեղագիտական ընկալումներ անագորայն, անհոռոյի. 19. տարածքային և հասարակական-քաղաքական բաժանումներ. հասարակական հարաբերություններ՝ աղախին, արուարձան, աւագ, գիւղ, գժտել, երկիր, ըմբոստ, ժողով(ուղ), խանգար, խափան, հպատակ, սառար և այլն. 20. ուղղմական գործ՝ ախոյեան, խոնապ, կապուտ «ավար», կոի(?) , մական, մկունդ, ոսոխ, պաշարել, պատանդ, քաշ և այլն. 21. կրոն՝ դաւանել (իրան. ?), երախայ «անկնունք», գառիկ «գոհ», հիւաղ, յուտուր, ուրու, պիղծ, սարկաւագ, վնուկ, օրեք «անեծք» և այլն:

Ըստ բնիկ-հնդեվրոպական և փոխառյալ բառերի հետ ունեցած հարաբերության կարելի է տարբերել անհայտ ծագման (չստուգաբանված) բառերի երկու շերտ. 1) իմաստային առումով միայնակ բառեր, որոնք չունեն իմաստային մերձավոր զուգահեռներ ո՛չ բնիկ և ո՛չ էլ փոխառյալ բառերի մեջ. 2) բնիկ և հնդեվրոպական բառերի մեջ իմաստային ավելի կամ պակաս մերձավոր զուգահեռներ՝ համանիշներ ունեցող բառեր. սրանց մեջ էլ կարելի է տարբերել ա) միայն բնիկ բառերի մեջ զուգահեռներ ունեցող, բ) միայն փոխառյալ բառերի մեջ զուգահեռներ ունեցող, գ) և՛ բնիկ, և՛ փոխառյալ բառերի մեջ զուգահեռներ ունեցող բառեր. նշենք, որ բնիկ ու փոխառյալ բառերի և անհայտ ծագման բառերի միջև կան գործածականության տարբեր հարաբերություններ:

Առանձնապես շատ են իմաստով միայնակ բառերը կոնկրետ (թանձրացական) իմաստներ արտահայտող և տերմինային արժեք ունեցող բառերի մեջ՝ ընդհանրական հարաբերությունների անվանումներ, բույսերի, կենդանիների և մարմնի մասերի, տնային իրերի, գործիքների անուններ և այլն: Կան դեպքեր, երբ անհայտ ծագման բառերի մեջ տվյալ իմաստը ներկայացված է մի քանի համանիշով, մինչդեռ բնիկ և փոխառյալ բառերի մեջ զուգահեռներ չկան:

Անհայտ ծագման միայնակ բառեր են մարմնի մասերի անվանումների մեջ՝ ուղեղ, ճակատ, յօճք, քիթ, ունջ, շուրթն, փետուր. ուտելիքի և ըմպելիքի հետ կապված բառերի մեջ՝ ապուր, արգանակ, ծաւալ, պապակ. հագուստի և զարդարանքի հետ կապված բառերի մեջ՝ կարել, հիւսել, գոլպայ, գօտի. սանդղ. բուսականության և երկրագործության հետ կապված բառերի մեջ՝ եղինձ, խաղող, տանձ, կալ, ցորեան և այլն:

Մի շարք դեպքերում անհայտ ծագման բառերը հակադրական զուգեր են կազմում բնիկ-հնդեվրոպական բառերի հետ. հմմտ. էգ և ուրձ, ձախ և աշ, կարն և երկար (երկայն), կորնշիլ և գտանել և այլն:

Այժմ մի քանի խոսք հնչական և բառակազմական այն առանձնահատկությունների մասին, որոնք հանդես են գալիս անհայտ ծագման բառերի առանձին խմբերում:

Ամենից առաջ մենք նկատում ենք ձայնավորների ու երկբարբառների և բաղաձայնների մի շարք յուրահատուկ հերթագայություններ.

1. ձայնավորների և երկբարբառների հերթագայություններ.

ա—ո՝ փաթ—փոթ, տարմ—տորմ

ի—ու—ո՝ րժիժ (հմմտ. բջիջ)—րժուժ—բոժոժ

իւ—ե—ո՝ ճիւղ—ճեղ (ճեղք)—ճող

իւ—ե—ի՝ շիւղ—շեղ—շիղ

իւ—ոյ—ո(ր)՝ դիրք—(ան)դուր—(ան)դորք

2. բաղաձայնների հերթագայություններ՝ մասամբ բարբառային հին լուսլթի<sup>20</sup>.

ր—ի՝ բաղ—փաղ

պ—փ՝ պատ—փաթ (փոթ), պրծանիլ (պուրծ)—փրծանիլ, փրթանիլ

ղ—թ՝ անհեղեղ—անհեթեթ, բղեղ—փաթեթ

գ—կ՝ գձուձ (գծուձ)—կծիծ (կծծի), գրդմիլ—կարկամել

կ—ք՝ կնճիռն—քնթոնոց

թ—ճ՝ դուառթ—դուարճ

թ—ջ՝ լուրթ—լուրջ

թ—տ—ծ—ճ՝ թալալ—տապալ—ծաւալ—ճապաղ, հպարտ—պարծիլ, յուռթի—ուռճանալ, խիղճ—խիղծ, պղտոր—պիղծ

փ—լ՝ շաղափ—շառաւիղ, սօսափիւն—սօսաւիւն

թ—խ—շ—ս՝ փթուր (փթիր)—փուխր—փշուր (և փռչկ «թրիք» ?)

տ—ձ՝ լորաու—լորձն

կ—խ՝ ակումբ—խումբ, պապակ—պապախ

ք—խ՝ քրքիր—խրխիր

ձ—ծ՝ դձուձ—կծիծ

ժ—շ—լ՝ խոժոռ—խոշոր—խոլոռ

խ—ծ՝ մոխիր—մոծիր

խ—հ՝ խացակել—հացակել, խալամ—հալամ (խեթ. halanta—«գլուխ» բառից)

խ—շ՝ խիրտ (խղորբաւիւն)—շլրտել

ր—շ՝ կորդ—կոշտ (հմմտ. հ.-ե. ծագման լերկ և լեշկ)

լ—ն՝ լախուր—նեխուր:

Անհայտ ծագման բառերի բառակազմական առանձնահատկությունները կարծեք թե չեն խոսում այդ բառերի միասնական ծագման մասին: Ամենից առաջ նշենք, որ այդ բառերը (բառարմատները) մեծ մասամբ բաղաձայնակ են և, անշուշտ, շատ դեպքերում բաղադրական կազմություն ունեն, բայց քիչ թվով դեպքերում մենք կարող ենք խոսել նրանց բաղադրյալ լինելու մասին և առանձնացնել որոշակի տարրեր: Միավանկ բառերի դեպքում, պետք է կարծել, մենք գործ ունենք գերազանցապես արմատական ձևերի հետ, ահավասիկ ք—խ տառերով սկսվող մի շարք այդպիսի բառեր, և արմատներ՝ լաղձ, քիք, բիծ, բօք, գամ «մեխ», գամ «կվռան», ճար. անգամ», գայթ, գայտ, գանգ, գէգ «արատ, ճեղք», գէթ, գէշ «դիակ», գի (նոր՝ գիճի), գիգ «նետ», գիծ, գոգ «մեզ», գութ, գուն, գօս, դար «բարձրավանդակ», դիւր, դուն «քիչ», եղկ «գուլ», քաթ, քափ, քեփ, քիղ, քոյն, քոյր «գուլն», բուխ (թխել), բուրբ (բուխալ), բուրծ, բոֆ, իղձ, լոռ (լոռ) «մամուռ», խափ «հաստ, թավ», խափ «կապտականալ», խակ, խարձ «եղեգնուտ», խաւ «շերտ», խաւ «աղվամազ», խաւ «երիզ», խափ-, խեղդ-, խեթթ/դ, խեց, խե, խեծ, խիւ,

<sup>20</sup> Սրանց ավելի շրիվ ցանկը տե՛ս «Очерки по истории дописменного периода армянского языка» գրքում (Երևան, 1967, էջ 300—313):



խիստ, խիտ, խիս, խոնջ «հոգնած», խոր, խորք, խումբ (հմտ. ակումբ), խոփ, խօս և այլն:

Անցնելով բազմավանկ բառերի քննությանը՝ նախ փորձենք առանձնացնել նախամասնիկավոր որոշ կազմություններ:

Որոշ բառերի և բառային տարբերակների համեմատության միշտ ոչ հնարավոր է առանձնացնել նախամասնիկներ, որոնց ածանցական արժեքը ոչ միշտ է որոշակի: Այսպես, անօտ և օտը ձևերի համեմատությամբ կարծեք թե կարելի է առանձնացնել ան- նախամասնիկը, ինչպես անօթի բառում՝ օթի-ի համեմատությամբ, որ ունի հնդեվրոպական ծագում. բայց օտը ձևը հանդիպում է համեմատաբար ուշ և կարող է լինել անկման արդյունք: Այդպիսի ա հանդիպում է ապուր բառում (այստեղից ապրել և ապրանք), եթե այն իրոք կապված է պուրծ- (պրծանիլ) արմատի հետ, ինչպես նաև ակումբ բառում, եթե այն կապված է խումբ բառի հետ:

Անհեթեթ (անհեղեղ), անհոռի, անօպայ «անխելք, տգետ», անփայլի «ամալի, անմարդաբնակ» բառերում բոլոր իմաստի կարելի է առանձնացնել հայերենի ան- նախածանցը, բայց -հեթեթ, -հոռի, -ոպայ, -փայլի առանձին ձևեր հայտնի չեն: Ամփոփ և սփռված ձևերի համեմատությամբ կարելի է առանձնացնել հայկական ան-/ամ և ս- (հմտ. փռել և սփռել) կամ, թերևս, գ- (գ-վափ > սփռված) նախամասնիկները, բայց չկա առանձին գործածված փոփ արմատ. վերջինս առկա է նաև փոփոցել «սփոփել» բայի մեջ, որի -ոգ- ածանցը կարելի է համեմատել նորոգ (նորոգել) բառի -ոգ ածանցի հետ: Ախմար «տխմար» և տխմար բառերի համեմատությամբ նարավոր է առանձնացնել ան- (հմտ. իրան. ձ- ան-) և տ- ժխտական մասնիկները, բայց հայտնի չէ՝ խմար առանձին ձև. կասկածելի է սրա կապը յիմար բառի հետ:

Ինչպես նախամասնիկավոր, այնպես էլ վերջամասնիկավոր կազմությունների առանձնացման հարցում հանդես են գալիս դժվարություններ: Եթե առանձին դեպքերում ակնհայտ է ածանցելի և ածանցյալ հիմքերի որոշակի հակադրությունը, ապա այլ դեպքերում մենք առաջնորդվում ենք պարզապես բառերի վերջում միևնույն հնչյունազուգորդումների առկայության փաստով՝ առանց լիովին վստահ լինելու դրանց ածանցական արժեքի մեջ: Մի շարք դեպքերում առկա են հայերենի համար սովորական վերջածանցների տիպի վերջածանցներ, բայց կամ մենք չենք կարող ապացուցել դրանց վերջածանցային արժեքը, կամ էլ լուծել հայերեն համապատասխան ածանցների հետ նույնական թե համանուն լինելու հարցը: Ահավասիկ լուսաբանող օրինակներ:

Թոժին «արջի ձագ» բառի -իւն-ը հիշեցնում է կորիւն բառի -իւն-ը, բայց այս բառի հնդեվրոպական ծագումը (\*gʷorebʰ-nu-) հիմնավորելու կամ խոնկոր բառի կոր-ի հետ կապելու փորձերը համոզիչ չեն: Առավել ևս կասկածելի է այն կապել մրջին բառի -իւն-ի հետ, որ ունի նաև -իւն տարբերակը (մրջիմն):

Եթե կաթիլ (հմտ. կաթ), շառափղ շող, ճառագայթ (նաև ճրողճոջ, սերունդ), տորմիղ (հմտ. տորմ), այլև հ.-ե. ծագման խնժիղ (հմտ. խինդ) բառերի մեջ -իլ/ղ ածանցի ծագումը հավաստի է, ապա դժվար է որևէ բան ասել բափղ լաբիրինթոս», խափղ «դրախտ, բուրաստան» բառերի -իղ հնչյունազուգորդման մասին:

Հայտնի չէ, կարելի՞ է արդյոք -եռ ածանց առանձնացնել բեւեռ, սեւեռ կամ -եռն ածանց բնդեռն (բնդիռն) «մի տեսակ բզեզ», լիսեռն բառերում, մանավանդ որ -եռն-ով վերջացող տիտեռն «կոկորդիլոս» բառը կարող է կրկնավոր լինել, ինչպես հ.-ե. ծագման քիթեռն բառը:

Շատ են հայերենում տարածված -ան, -սնկ, -իկ, -ոց, -ուկ ածանցներով վերջացող այնպիսի կազմությունները, որոնց ածանցելի հիմքերի մասին որևէ բան հայտնի չէ: Բերենք անհայտ ծագման այնպիսի բառերի մի փոքրիկ ցանկ, որոնց մեջ առկա են հայերենի սովորական ածանցների նման ածանցներ, բայց չկա ածանցելի ու ածանցյալ հիմքերի որոշակի հակադրու-

թյուն, և չի կարելի լիովին վստահ լինել համապատասխան ածանցների առանձնացման հարցում՝ օրինակ (-եան?), աղախին (-ին?), անագորոյն (-ոյն?), արգանակ (-ակ?), գետին (-ին?), դաշոյն (-ոյն?), զմբաղ (-աղ?) «հող», մտատանջություն», խանգար (-ար?) խարտեաշ (-աշ?), խողովակ (-ակ?), խոնջան (-ան?), խոպան (ան?), ծոծորակ (-ակ?), կարեհին (-ին?) «արմատ», կոծիկ (-իկ?) «կպցնող նյութ», կորեակ (-ակ?), հեղինակ (-ակ?), հենուկ (-ուկ?), մաշիկ (-իկ?), մատուռակ (-ակ?), վառեակ (-ակ?), ցորեան (-եան), փաթեան «թվատ» (-ատ?) և այլն:

Այժմ բերենք մի շարք ածանցներ, որոնց կարելի է վերագրել անհայտ, մասնավորապես ենթաշերտային ծագում.

-ազ՝ երազազ (աբազազ). հնարավոր է արմատի կովկասյան ծագումը, ինչն ենթադրվում է հայերենի և կովկասյան ձևերի համար մի երրորդ աղբյուր. հմմտ. թերևս նաև զուգազ «անկանոն դորք». տե՛ս նաև -ոզ, -ուզ.

-աթ՝ փարաթ-ել (փարադ-ել)՝ փար-ից. հմմտ. փաթեթ (-էթ), պաթուր (-ուր), ալլե պատատ(ուկ).

-ախ՝ խաղախ «նավակ», խաղախ «կաշի», խիզախ. հմմտ. լանախ (ան՝ հ.-լ.?), շաղախ (շաղ՝ հ.-լ.), փացախ (փաղ՝ հ.-լ.?).

-ատ՝ պատատ-ուկ՝ պատ-ից. հմմտ. -աթ.

-ափ՝ քարափ (հմմտ. քարթել), կարկափ-ել «պապանձվել», բերանը մտնող մոմուլ» (հմմտ. կարկել «փակել», կարկիլ «պապանձվել»), սարսափ (հմմտ. սարսիլ «զոդալ, սոսկալ»), թերևս նաև խառափ «խշրտոց».

-եթ (-լթ)՝ փաթեթ (-էթ). հմմտ. փաթաթ-ել, փաթոյթ (-ուր).

-եղ (-եխ)՝ գողեղ (-ել, -ող, -ոխ), մեղ (մեխ), թերևս նաև կեռեղ.

-իթ՝ կեռիթ (հ.-լ.?), կողկողիթ «կղակ, կլափ». քիչ հավանական է -իթ-ի առանձնացումը գալիթ, խրեթ բառերում.

-իմ՝ կալիմ (հմմտ. կալ), կալիմ «խիճ» (?), նանխին ?հմմտ. հախ, ճախին), պատաղիմ (հմմտ. պատաղ-իլ), սլատիմ (պատ- արմատից). հ.-լ. ծագման արմատներից են լուիմ, ուտիմ.

-իսխ՝ խարիսխ, խորիսխ.

-ուզ՝ զոռուզ. հմմտ. խոխուզ «խրոխու» (խոխուտիլ «հանդգնել»), կոկոզ «հպարտ», ինչն սրանք կրկնավորներ չեն. հմմտ. նաև բորո. տկուզ՝ տկուր-ի կողքին.

-ոթ՝ վարոթ (փոթ-ից). հմմտ. փաթաթ-ել, փաթեթ, փաթոյթ.

-ոյտ՝ կտոյտ (կտուտիլ «կտապվել») (?), պտոյտ (կապ ունի՝ արդյոք տատ-ել բայի հետ. հմմտ. նաև փաթոյթ):

-ոյր՝ խառոյր «մթին» (?), պառոյր (պար-ից).

-(ո)տի՝ ծակ(ո)տի, կալտի, ցեցտի, փոռտի. հ.-լ. ծագման հիմքերում են մանկտի, հնոտի, մեռելտի, ոսկերտի, սնոտի.

-որ՝ հատոր, պղտոր (հմմտ. պիղծ), փոթոր(իկ). ինչն նույնը չէ բնիկ արմատների մոտ հանդիպող բեկոր, բոլոր, գլոր, սին-լոր բառերի -որ-ի հետ, ապա ոչ հնդեվրոպական (ենթադրաբար) ծագում ունի. կարելի է արդյոք ժխոր, կտոր բառերի մեջ նույնպես առանձնացնել -որ ածանց.

-ուզ՝ զոռուզ «գանգուր», մրգուզ (մրգուզ) «անպիտան, նվաստ», պլուզ «փոքրիկ», բրու. տոռուզ. հմմտ. -ոզ. կասկածելի է, որովհետև հիմքերից ոչ մեկը առանձնակի գործածություն չունի.

-ուլ՝ քաթուլ (թաթ-ից), կափուլ (կափ-ուց-անել բայի արմատից).

-ուն՝ գրուն «մանր մորեխ», պարկուն «թրթուրի պատյան» (պարկ-ից). բրու. բրդուն բառի արմատը (բրդ-ել) բնիկ է. հմմտ. -ին.

-ուց՝ խոտուց «ողնուղեղ» (ունի և խոտուց ձևը), կտուց, նեղուց (նեղ-ից), պախուց (պախուց). թերևս նույնն է դեղնուց, խալտուց բառերի -ուց-ի հետ, որ -ուց-ի տարբերակն է և բնիկ ծագում ունի, սակայն վերևում բերված բառերի արմատները, ինչն սրանք իրոք առանձնացնելի են խոտուց, կտուց, պախուց բառերում, անհայտ ծագման են.

-ուռ՝ սարսուռ (հմմտ. սարսել «զոդալ, սոսկալ». հնարավոր է սրա



հ.-հ. ծագումը \*k'er- արմատից, որից ստանձնվել է նաև նապուտ «մազի», բրբռ. ծակուտ.

-ուր՝ կելուր-f «գլուտ, հնար, ճարտարություն» (կել կամ կելն «հնարություն, դավ» արմատից) և քափուր, քափափուր. հմմտ. նաև բարուր «պատրվակ» (?), կուուր, մափուր. հ.-հ. բնույթի է բլուր (\*bholu-? .

-ոֆ՝ պոոֆ (հմմտ. պոոոֆ), փոոֆ, թերևս նաև ամոֆ. այլ դեպքերում առկա են հնդեվրոպական հիմքեր՝ բարիֆ (բարուֆ), բոդոֆ (?), բորբոֆ:

-օտ (-աւտ)՝ կարօտ. ճիշտ է, կան առ-աւ-օտ (և աւօտ), ծլօտ բառերը, որոնց աղ-, աւ-, ծիղ (=ծիլ) արմատների հ.-հ. ծագումը հնարավոր է, և փորձեր են արվել -աւտ-ը հ.-հ. հիմքի վրա մեկնելու, բայց դրանք առայժմ համոզիչ չեն:

Վերջում նշենք, որ կան դեպքեր, երբ առկա են ակնհայտ կրկնավորներ, բայց բուն արմատների ծագումն անհայտ է. հմմտ. յորջորջ, ԳԳԳԳ «պատահական» և այլն:

Խնչ եզրակացությունների կարելի է հանգել քննարկված նյութի հիման վրա:

Եթե բացառենք այն բառերը, որոնք հետագա ուսումնասիրություններով կարող են հատկացվել հայերենի բնիկ բառաշերտին, ապա մնացած բառերի մեջ հարկ կլինի տարբերել երկու խումբ՝ ենթաշերտային (սուբստրատային) և փոխառյալ: Հայտնի է, որ ենթաշերտը ենթադրում է էթնիկական խոր փոխազդեցություն, հաղթող և հաղթված լեզուների առկայություն, խաչավորում կամ, նորագույն տերմինով ասած, փոխներթափանցում (ինտերֆերենցիա): Նեղ առումով ենթաշերտը հաղթված լեզվի ներդրումն է հաղթող լեզվի մեջ. այն կարող է հանդես գալ ոչ միայն բառապաշարի, այլև հնչական և քերականական կառուցվածքի բաղադրիչներում: Լայն առումով ենթաշերտի գաղափարի հետ կապված տարբերվում են նաև երկու այլ գաղափարներ՝ մակաշերտ (սուպերստրատ)՝ եկվորների լեզվի ներդրումը բնիկ լեզվի մեջ, և առշերտ (ադստրատ)՝ գոյակցող և խառը բնակչություն կազմող տարածքների լեզվական փոխազդեցությունը: Հայկական բարձրավանդակում տարածվելու ենթաշերտը հայերը կարող էին ձուլել մեկ կամ մի քանի լեզուներով խոսող բնակիչների, որոնք կարող էին հայերենի մեջ թողնել իրենց լեզվի (լեզուների) հետքերը: Այդպիսի ենթաշերտ փնտրել են, օրինակ, կովկասյան լեզուների (հմմտ. բաղաձայնական եռաստիճանությունը՝ ձայնեղներ, խուկեր, շնչեղ խուկեր), ուրարտեերենի (հմմտ. հ.-ի բարբառային խ փոփոխությունը) և այլ լեզուների մեջ: Եթե վերջին շրջանում տարածված էր ուրարտական ենթաշերտի գաղափարը մինչև այն աստիճան, որ եթե ուրարտեերենի մասին մենք ոչինչ չիմանայինք, հարկ կհամարվեր այն ենթադրել, այժմ կարելի է խոսել մեկից ավելի ցեղային և ցեղախմբային լեզուների ենթաշերտային ազդեցության դրույթի հավանականության մասին: Վիճակը մոտավորապես այնպես է, ինչպես հունարենի ենթաշերտի մեկնաբանության հարցում<sup>21</sup>. այստեղ մի ժամանակ գերակշռում էր պելասգյան վարկածը, բայց աստիճանաբար սկսում է գերակշռել բազմալեզվյան ենթաշերտի գաղափարը: Այսպիսով, գիտության զարգացման արդի փուլում հավանական է խոսել հայերենի բազմալեզվյան ենթաշերտի՝ Հայկական լեռնաշխարհի տարբեր ցեղային և ցեղախմբային լեզուների ազդեցության մասին: Քանի որ այդ լեզուներից շատերն անհետ կորել են, հայերենը դարձել է դրանց մնացորդների միակ կրողը: Պետք է կարծել, որ այդ լեզուների կորստին նախորդել է «հայերեն + մի այլ լեզու» բնույթի երկլեզվությունը, համապատասխան փոխներթափանցումը և ապա Հայաստանի բնակիչների միալեզու դառնալը՝ արդեն Սարաքոնի ժամանակներում:

Որոշ պայմանականությամբ մենք կարող ենք խոսել հայերենի վրա իրանական որոշ լեզուների՝ մեդերենի (մարերենի) և, մանավանդ, պարսե-

<sup>21</sup> Նանրամասների մասին տե՛ս Ю. В. Откупщиков. Догреческий субстрат. Л., 1988.

քենի մակաշերտային ազդեցության մասին, եթե նկատի առնենք Հայաստանում իրանական իշխող վերնախավի առկայությունը: Ավելի ուշ շրջանում էարևի 1. խոսել լոկ իրանական փոխառությունների մասին:

Փոխառությունը արդյունք է գերազանցապես մշակութային ազդեցության և հանդես է դալիս առաջին հերթին բառապաշարի մեջ. երրեմն էլ, փոխառությունների բաղադրանակության դեպքում, բառակազմության, դարձվածաբանության մեջ: Փոխառությունները կարող են լինել անմիջական և միջնորդված, բանավոր և գրային: Նախքան V դարը փոխառությունները բնականաբար առաժնվել են միայն բանավոր ճանապարհով:

Հայագիտության առաջիկա ինդիրներից մեկը պետք է լինի ոչ միայն անհայտ ծագման բառերի երկու շերտի տարրերակումը, այլև ենթաշերտի մեջ տարրեր լեզուների պատկանող շերտերի առանձնացումը և առանձնահատկությունների որոշումը: Սրա հետ կապված հարկավոր է հասնել հայերենի լինիկ և ոչ լինիկ, ներքին բարդացման և արտաքին ազդեցության արդյունք հանդիսացող երևույթների հստակ սահմանադատմանը:

Սի շտրք դեպքերում ներառվոր է հայերենի ոչ բնիկ տարրերի համար զուգահեռներ որոնել հատուկ անունների մեջ, ինչպես այդ արված է մեր կողմից խնթական, խուռական, ուրարտական և այլ հատուկ անունների՝ հայերեն բառերի հետ կատարված գուգագրումների հիման վրա, զուգադրումներ, որոնք պետք է հենվեն որոշակի մեթոդների և տվյալների, բայց ոչ սխառահական նմանությունների վրա:

Եթե նկատի տոնենք, որ հայերենի ենթաշերտի սեղ կարող են լինել անհետացած հնդեվրոպական լեզուների մնացորդներ, ապա այս դեպքում էական է հայերենի կողմնակի հնդեվրոպական շերտի այն վարկածի հաստատումը, որ մի ժամանակ առաջ է քաշվել մեր կողմից, մոռացության մատնվել և մեր օրերում վերարծարծվել Զ. Գրեպինի կողմից:

## АРМЯНСКИЕ КОРНЕВЫЕ СЛОВА НЕИЗВЕСТНОГО ПРОИСХОЖДЕНИЯ

Академик АН АрмССР Г. Б. ДЖАУКЯН

### Резюме

По приблизительным оценкам, корни неизвестного происхождения составляют 40—50 процентов от всех армянских корней. Нами предлагаются следующие четыре метода косвенного объяснения характера этих корней: 1) выделение в армянском иностра-нических корней, идущих не от индоевропейского праязыка; 2) выделение армяно-кавказских общих корней, восходящих к третьему источнику (урартскому?); 3) выделение слов индоевропейской этимологии не армянского происхождения, пока не объяснимых на основе данных известных индоевропейских языков; 4) выделение армянских слов, в составе которых прослеживаются урартские суффиксы и для которых, следовательно, можно предположить урартское происхождение. В статье слова неизвестной этимологии распределяются по тематическим группам и делается попытка выделения суффиксов неизвестного (субстратного) происхождения. На основании сопоставления всех данных мы приходим к выводу, что нельзя говорить о гомогенном (в частности, только урартском) происхождении слов неизвестной этимологии, а следует предположить для армянского разные языковые субстраты.